Կոչ ուղղված Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանին

ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքը չստորագրելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ

2026թ. հուլիսի 3-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվեց ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, որով նախատեսվեց սահմանել ընտրելու իրավունք ունենալու համար բնակության ցենզ՝ սահմանելով, որ «Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ընտրության օրը 18 տարին լրացած, քվեարկության օրվան նախորդող 48-րդ, իսկ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 28-րդ օրվա դրությամբ համապատասխանաբար դրան նախորդող 730 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում փաստացի 366 և ավելի օր գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները»[1]:

Որպես այս պահանջից բացառություն նախատեսվել են միայն այն դեպքերը, երբ բացակայությունը պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության մեջ գտնվող անձի՝ ծառայողական նպատակներով արտերկրում գտնվելու կամ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող անձի ընտանիքի անդամի՝ դիվանագիտական ծառայություն անցնող անձի հետ արտերկրում բնակվելու կամ արտերկրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության հանգամանքներով:

Որպես հանրային պահանջի բավարարման համար մատուցվող այս նախագիծը որևէ պատշաճ հանրային քննարկման չի ենթարկվել, որևէ միջազգային փորձագիտական կարծիք չի հայցվել, թեև առաջարկվող կարգավորումը միտված է սահմանափակել սահմանադրական իրավունք: Այն ներկայացվել է ՀՀ ազգային ժողովի մի խումբ պատգամավորների կողմից 2026թ. հունիսի 12-ին և ընդգրկվել է 2026թ. հուլիսի 2-ին ՀՀ ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի օրակարգում՝ որպես անհետաձգելի նախագիծ և 24 ժամյա ռեժիմով երկրորդ ընթերցմամբ ընդունվել 2026թ. հուլիսի 3-ին:

Մենք՝ ներքոստորագրյալ հասարակական կազմակերպություններս, խստորեն դատապարտում ենք ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին ընդունված օրենքը՝ որպես հակասահմանադրական և

[1] http://www.parliament.am/draftreading_docs8/P-1368_DR2.pdf

ընդհանուր և հավասար ընտրական իրավունքի անօրինական ու անհամաչափ սահմանափակում, ինչը վտանգում է ժողովրդավարական սկզբունքները և խախտում ՀՀ քաղաքացիների քաղաքական իրավունքները:

ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածը նախատեսում է, որ ազգային ժողովի [...] ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք: Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու իրավունքի միակ սահմանափակումները, մասնավորապես ընտրելու իրավունքի արգելք նախատեսելով այն անձանց համար, ովքեր դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ են ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք են:

Ընտրական իրավունքի որևէ այլ սահմանափակում ՀՀ Սահմանադրությունը չի նախատեսում, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների նստակեցության ցենզ: Հետևաբար, որևէ փորձ օրենսդրական մակարդակում սահմանափակելու ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքը, հակաօրինական և կամայական է՝ հակասելով ՀՀ Սահմանադրությանը:

Թեև ընտրական իրավունքը բացարձակ իրավունք չէ և կարող է ենթարկվել որոշակի պայմանների կամ սահմանափակումների, դրանք, սակայն, պետք է լինեն համաչափ և անհրաժեշտ, ինչպես նաև բացառեն խտրականությունն ու կամայականությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Շինդլերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում սահմանել է, որ որպեսզի պետության կողմից կիրառված միջոցները համատեղելի լինեն ընտրական իրավունքի հետ, դրանք պետք է չխաթարեն իրավունքի բուն էությունը և չզրկեն այն արդյունավետությունից, հետապնդեն իրավաչափ նպատակ և լինեն համաչափ: Ավելին, ընտրելու իրավունքը արտոնություն չէ, և 21-րդ դարում ժողովրդավարական պետությունում կանխավարկած պետք է լինի ներառման օգտին: Բնակչության ցանկացած խմբի ընտրական իրավունքից զրկելը պետք է համատեղելի լինի Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի հիմքում ընկած նպատակների հետ: Համընդհանուր

ընտրական իրավունքի սկզբունքից ցանկացած ընդհանուր, մեխանիկական և անխտիր շեղում վտանգում է խաթարել ընտրված օրենսդիր մարմնի և դրա կողմից հրապարակվող օրենքների ժողովրդավարական լեգիտիմությունը[2]:

Վենետիկի հանձնաժողովի ընտրական հարցերով լավագույն փորձի կանոնները սահմանում են, որ մշտական նստակեցության պահանջ կարող է ներկայացվել, սակայն նստակեցության ժամկետի պահանջ կարող է ներկայացվել քաղաքացիներին միայն տեղական կամ տարածքային ընտրությունների համար, ինչպես նաև ընտրելու և ընտրվելու իրավունքը կարող է տրամադրվել արտասահմանում բնակվող քաղաքացիներին[3]:

Ու թեև պետություններն ունեն հայեցողության լայն շրջանակ նստակեցության չափանիշներ սահմանելու հարցում, սակայն այդ շրջանակն անսահմանափակ չէ: Օրինակ, Մոնտենեգրոյի սահմանադրությամբ և ընտրական օրենսդրությամբ նախատեսված 2 տարվա նստակեցության պահանջն ընտրություններին մասնակցելու համար Վենետիկի Հանձնաժողովի ու ԵԱԿՀ/ԺՀՄԻԳ կողմից գնահատվել է որպես անհիմն սահմանափակում, որը հակասում է միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Վենետիկի հանձնաժողովի Ընտրական հարցերով լավագույն փորձի կանոններին, այնպես էլ ԺՀՄԻԳ և Եվրոպայի խորհրդի առաջարկներին[4]: Հետևաբար, Մոնտենեգրոյին առաջարկվել է նստակեցության ժամկետի պահանջը հեռացնել սահմանադրությունից և ներպետական օրենսդրությունից[5]:

Իսկ Կանադայի Սահմանադրական դատարանը հակասահմանադրական է ճանաչել Ընտրական օրենսգրքում այն դրույթը, որով երկրից դուրս հինգ տարուց ավել բնակվող Կանադայի քաղաքացիները զրկվում էին ընտրելու իրավունքից[6]:

---

[2] Շինդլերն ընդդեմ Միացյալ Թագավորության, դիմում 19840/09, վճիռ 07.05.2023թ., պարագրաֆ 99-103:

[3] CODE OF GOOD PRACTICE IN ELECTORAL MATTERS, 2002, https://docs-venice.coe.int/images/SITE%20IMAGES/Publications/Code_conduite_PREMS%20026115%20GBR.pdf

[4] Շինդլերն ընդդեմ Միացյալ Թագավորության, դիմում 19840/09, վճիռ 07.05.2023թ.:

[5] Joint urgent opinion on the draft Law on elections of members of the Parliament and councillors of Montenegro, 0989/2020, CDL-PI(2020)007, 3 July 2020, https://www.coe.int/en/web/venice-commission/-/opinion-989

[6] Frank v. Canada (Attorney General), the Supreme Court of Canada, https://www.scc-csc.ca/judgments-jugements/cb/2019/36645/

Մի շարք երկրներում երկրից դուրս երկար ապրող քաղաքացիները պահպանում են ընտրելու իրավունքը, եթե որևէ փուլում անցյալում բնակվել են երկրի տարածքում կամ ընդգրված են եղել երկրի բնակչության ռեգիստրում[7]:

Համապատասխանաբար, ՀՀ-ից որոշ ժամանակով բացակայող կամ արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիները բացառապես քաղաքացիության ուժով ունեն բոլոր քաղաքացիների իրավունքները, այդ թվում՝ ընտրելու իրավունք, և կրում են ՀՀ քաղաքացիների պարտականությունները, որոնցից արտերկրում բնակվելու ուժով չեն ազատվում, օրինակ՝ պարտադիր զինվորական ծառայություն անցնելու:

Նախագծի ընդունման այն հիմնավորումը, որ արտերկրում բնակվող քաղաքացիների ընտրությունը կարող է էական ազդեցություն ունենալ ՀՀ ներքին կյանքում, այդ թվում՝ ուղղորդված, մտացածին է և ոչ ապացուցահեն: Հետևաբար, անհրաժեշտ է առաջնորդվել ազդեցության գնահատման իրատեսական հեռանկարներով, այլ «ոչ արտերկրից ընտրողների հիպոթետիկ ներխուժման շուրջ հանրային վախով»[8]:

Ավելին, ընտրական օրենսդրության բարեփոխումների արդյունավետ իրականացումը պահանջում է հետընտրական շրջանում խնդիրների հավաքագրում և գնահատում, շահագրգիռ կողմերի ու լայն հանրային քննարկումների իրականացում ու հիմնավորված օրենսդրական կարգավորումների ընդունում:

Կրկնենք, ընտրական իրավունքին վերաբերող օրենքի նախագիծը թեև ուներ հանրային բարձր կարևորություն և ՀՀ քաղաքացու իրավունքների վրա մեծ ազդեցություն, չի քննարկվել ո՛չ ոլորտային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և մասնագետների, ո՛չ հասարակության առավել լայն խմբերի հետ: Նախագիծը հապշտապ առանց որևէ պատշաճ հիմնավորման և ազդեցության գնահատման ընդգրկվել է լիազորությունները ավարտող ՀՀ ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում՝ որպես արտահերթ քննարկման ենթակա օրենսդրական նախագիծ, ինչը խաթարում է ժողովրդավարական կառավարման սկզբունքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կոչ ենք անում ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին չստորագրել ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին 2026թ. հուլիսի 3-ին ընդունված օրենքը և դիմել ՀՀ

---

[7] Տե՛ս, օրինակ՝ Շվեդիայի Սահմանադրություն, Գլուխ 3, հոդված 4, https://www.constituteproject.org/constitution/Sweden_2012.pdf; Մեծ Բրիտանիայի Representation of the People Act 1985, Section 1A, as amended by Section 14 of the Elections Act 2022, https://www.legislation.gov.uk/ukpga/2022/37/section/14

[8] IDEA, Out-of-Country Voting, https://www.idea.int/sites/default/files/publications/out-of-country-voting.pdf

սահմանադրական դատարան ՀՀ Սահմանադրությանը դրա համապատասխանությունը որոշելու հարցով:

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ

Իրավունքի կենտրոն ՀԿ

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ

Հելսինկյան ասոցիացիա ԻՀԿ

Ժողովրդավարության և անվտանգության տարածաշրջանային կենտրոն

Արդարության նոր մշակույթ ՀԿ